ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2017թվականի սեպտեմբերի 14-ի N 8- Լ

Ղեկավարվելով Համալսարանի կանոնադրության 48-րդ կետի 4-րդ ենթակետով և լսելով <<Համալսարանի ուսանողի մասնագիտական կամավորական գործունեության և դրա համար ուսանողին հավելյալ կրթական միավորներ տրամադրելու, ամրագրելու, հաշվառելու և ճանաչելու Ժամանակավոր կարգի մասին>> Աշխատակազմի և միջազգային համագործակցության հարցերով պրոռեկտոր Արա Երեմյանի հաղորդումը՝

Գիտական խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանողի մասնագիտական կամավորական գործունեության և դրա համար ուսանողին հավելյալ կրթական միավորներ տրամադրելու, ամրագրելու, հաշվառելու և ճանաչելու Ժամանակավոր կարգը:
2. Ուսումնական գործընթացների վարչությանը հանձնարարել մինչև 2017թ. հոկտեմբերի 1-ը ֆակուլտետներին ապահովել Ժամանակավոր կարգի 2-րդ հավելվածին համապատասխան մատյաններով:
3. Ֆակուլտետների դեկաններին հանձնարարել մինչև 2017թ. հոկտեմբերի 1-ը իրազեկել ուսանողներին Ժամանակավոր կարգի մասին:
4. Տեղեկատվական Տեխնոլոգիաների կենտրոնին հանձնարարել մինչև 2017թ. նոյեմբերի 1-ը Google classroom պորտալում ստեղծել Ժամանակավոր կարգից բխող համապատասխան գործիք:
5.Լրատվական վարչությանը հանձնարարել 3 օրյա ժամկետում Ժամանակավոր կարգը տեղադրել aspu.am համալսարանի կայքում:
6. Ուսումնական գործընթացների վարչությանը, Ֆակուլտետների դեկաններին, ամբիոնների վարիչներին հանձնարարել աշխատանքները կազմակերպել և իրականացնել Կարգին համապատասխան:
7. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Միհեր Մելիք-Բախշյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռուբեն Միրզախանյան